

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

ք. Երևան

4 մարտի 2005 թվականի

Մասնակցում էին՝

- Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ
- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահի տեղակալ
- Ա. Գրիգորյան - Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար
- Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
- Հ. Ճշմարիտյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Յու. Շուքուրյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Գ. Չուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Լ. Մինասյան - Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն
- Ա. Բաղդյան - «Յունիքոմֆ» ՓԲԸ-ի նախագահ
- Ռ. Վարդանյան - «Քվանտ» վարժարանի տնօրեն
- Մ. Գևորգյան - «Քրեդենս Սիստեմ» ամերիկյան ընկերության մասնաճյուղի տնօրեն

հրավիրվածներ՝

- Ա. Խաչատրյան - «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի նախագահ
- Ռ. Աթոյան - «Ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Է. Մանուկյան - «Իսմա» ՍՊԸ-ի տնօրեն

- Գ. Մանդուխյան - «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության ծրագրի ղեկավար
- Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
- Ա. Մախիյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ
- Լ. Գալստյան - «Էլ-Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն
- Ս. Մանուկյան - «Իսամ» ՄՊԸ-ի փոխտնօրեն
- Ա. Շահվերդյան - «Opensource Armenia» ծրագրի տնօրեն
- Լ. Դոյրոյան - «AM» ամսագրի գլխավոր խմբագիր
- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ
- Ա. Խանազադյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
- Ա. Հայրիյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Մկրտչյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Խորհրդի կազմում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի կազմակերպությունների ներկայացուցիչների ռոտացիայի մասին

Ա. Գրիգորյան

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիս-

տի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

Ա. Գրիգորյան

3. 2004 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործունեության մասին հաշվետվության ներկայացում

Ա. Գրիգորյան

4. Այլ հարցեր

1. Խորհրդի կազմում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի կազմակերպությունների ներկայացուցիչների ռոտացիայի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Մարգարյան)

1. Հավանություն տալ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կազմում «Մշակ» ՓԲԸ-ի նախագահի, «Քրեդենս Սիստեմ» ամերիկյան ընկերության մասնաճյուղի տնօրենի, «ԷյՓիՋի Լաբս» ՍՊԸ-ի տնօրենի, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրենի, «Յունիքոմփ» ՓԲԸ-ի նախագահի և «Քվանտ» վարժարանի տնօրենի փոխարեն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակից «ԱրմենԹեյ» ՀՀ» ՓԲԸ-ի գործադիր գլխավոր տնօրենին, «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի նախագահին, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի նախագահին, «Լինք» ՍՊԸ-ի տնօրենին, «Ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենին, «Իսմա» ՍՊԸ-ի տնօրենին ռոտացիոն կարգով ընդգրկելու առաջարկությանը:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Հ. Ճշմարիտյան, Յու. Շուքուրյան, Ա. Շահվերդյան, Գ. Չուգասզյան, Ա. Քուչուկյան, Ա. Ավետիսյան, Ա. Մարգարյան)

2. Ընդունել ի գիտություն խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Հ. Ճշմարիտյանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ, խորհրդի գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Յու. Շուքուրյանի և «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ, խորհրդի դոնոր և միջազգային կազմակերպությունների կոորդինացման աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը խորհրդի նախորդ նիստում տրված հանձնարարականների կատարման ընդացքի մասին:

3. Հավանություն տալ խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի կողմից ներկայացված` էլեկտրոնային զարգացման ծրագրի և դրանից բխող գործառույթներ իրականացնող նոր ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորման հարցերով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին առաջարկությանը:

4. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ, խորհրդի գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Յու. Շուքուրյանին` ուսումնասիրել խորհրդի անդամների առաջարկությունները «OpenOffice.org» ծրագրի կիրարկման նպատակահարմարության վերաբերյալ և այդ մասին ձևավորված ամփոփ առաջարկությունը ներկայացնել խորհրդի հաջորդ նիստում:

3. 2004 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործունեության մասին հաշվետվության ներկայացում

 (Ա. Գրիգորյան, Տ. Դավթյան, Ա. Մարգարյան)

5. Հավանություն տալ 2004 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործունեության մասին հաշվետվությանը:

6. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կ. Ճշմարիտյանին` մեկամսյա ժամկետում սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկարկմանը ներկայացնել ՀՀ

կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1922-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վիճակագրության իրականացման բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառում ընդգրկելու վերաբերյալ առաջարկություն:

4. Այլ հարցեր

(Ա. Գրիգորյան, Յու. Շուքուրյան, Գ. Չուգասյան, Ա. Քուչուկյան, Է. Մանուկյան,
Ա. Մարգարյան)

7. «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ, խորհրդի դոնոր և միջազգային կազմակերպությունների կոորդինացման աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասյանին՝ մեկամսյա ժամկետում աշխատանքային խմբում քննարկել 2005 թվականի նոյեմբերին Թունիսում կայանալիք «Տեղեկատվական հասարակություն» գազաթաժողովին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցության հարցը և քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունը ներկայացնել խորհրդի հաջորդ նիստում:

8. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարությանը՝

ա) մեկամսյա ժամկետում մշակել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 2005 թվականի գործունեության ծրագրի նախագիծ, այն քննարկել խորհրդի աշխատանքային խմբերում և ներկայացնել խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:

բ) խորհրդի հաջորդ նիստի օրակարգում ընդգրկել «Իսամ» ՍՊԸ-ի կողմից մշակված հայերեն-անգլերեն թարգմանչական ծրագրի քննարկման մասին հարցը:

Խորհրդի նախագահ,

ՀՀ վարչապետ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

Մարգարյան

Խորհրդի քարտուղար

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Գրիգորյան